ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

«04» սեպտեմբերի 2013 թ.
թիվ 117

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի օգոստոս ամսվա ընթացքում ընդունած որոշումը և արձակած կարգադրությունները

Առդիր 7 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ա. Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 8667-13
23 09 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«26» օգոստոսի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 29

## ՀԱՄԱՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ ենթակետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդով վաճառքի արդյունքները.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հաստատել՝ Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքում 2013 թվականի օգոստոսի 26-ին կայացած 0.008 հա հողատարածքի աճուրդով վաճառքի արդյունքներով կազմված արձանագրությունները:
2. Աճուրդում հաղթող ճանաչված Օգսեն Նշանի Նազարյանի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր՝ ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
սեպտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 05» օգոստոսի 2013թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 9

## ԽՈՒՐՇՈՒԴ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Խուրշուդ Քոչարյանի 2013 թվականի օգոստոսի 5-ի դիմումը.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին տրամադրել 2013 թվականի ամենամյա արձակուրդը՝ սույն թվականի օգոստոսի 7-ից մինչև սեպտեմբերի 9-ը ներառյալ՝ (24 աշխատանքային օր):
2. Խուրշուդ Քոչարյանին աշխատանքի մեջ համարել 2013 թվականի սեպտեմբերի 10-ից:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայ համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
սեպտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 26» օգոստոսի 2013թ.-ի

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 10

## ԽՈՒՐՇՈՒԴ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Խուրշուդ Քոչարյանի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքները.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 137 500 (մեկ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
սեպտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 26» օգոստոսի 2013թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 11

## ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով և հիմք ընդունելով Աննա Թադևոսյանի կիսամյակային հաշվետվությունը.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Գայ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 135 500 (մեկ հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
սեպտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 26» օգոստոսի 2013թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 12

## ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Անահիտ Սարգսյանի գերազանց կատարած աշխատանքները.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Գայ համայնքի «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Սարգսյանին աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու համար պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 67 900 (վաթսունյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
սեպտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 26» օգոստոսի 2013թ.-ի

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 13

## ՄԱՆՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Մանյա Կարապետյանի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքները.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Գայ համայնքի «Մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Մանյա Կարապետյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 65 600 (վաթսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
սեպտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 26» օգոստոսի 2013թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 14

## ԱՆԱՀԻՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Անահիտ Տերտերյանի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքները.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Գայ համայնքի ղեկավարի օգնական՝ իրավաբանական գծով Անահիտ Տերտերյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 62 500 (վաթսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
սեպտեմբերի 04-ին
գ. Գայ